

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ  
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՅԻՒՄՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1878 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Զ.

4 ՕԳՈՍՏՈՍ 1878

ԻՐԱԿՈՒՆՔ ԵՒ ՊԱՐՏՔ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ  
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ Մ՝ՏՆՏԵՍԵԱՆ  
— 1878 —

**ԴԻԻԱՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ**

**ՄԱՅՐ ԴԻԱՆ**

Ստեփան փաշա Ասլանեան	Ա. Արեւ-դէր
Տիգրան էֆէնտի Եուսուֆեան	Բ. »
Յովհաննէս էֆէնտի Նուրեան	Գ. »
Համբարձում էֆէնտի Ս. Մլաճաճեան	Ա. Արեւ-դէր
Մկրտիչ էֆէնտի Մէլիբեան	Բ. »
Ատովմ էֆէնտի Տէրոյնց	Գ. »

**ՉԼՈՆՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ**

Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրլեան	Արեւ-դէր
Ներսէս վարդապետ Ասլանեան	
Սենեքերիմ էֆէնտի Մանուկեան	

**ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ**

Խորէն Արքեպիսկոպոս Նար-սէյ	Արեւ-դէր
Գէորգ էֆէնտի Ապտուլլահ	
Գէորգ էֆէնտի Սիմաբաճեան	

**ԿԱԼՈՒԱԾՈՑ ԴԻԻԱՆ**

Յովհաննէս էֆէնտի Լուսեան	Արեւ-դէր
Մինաս էֆէնտի Գարամաճեան	
Պօղոս էֆէնտի Ժամակոչեան	

**ԹԱՐԱՐԵՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ**

Կարապետ էֆէնտի Շահապեան	Արեւ-դէր
Յարութիւն էֆէնտի Մէրեճի-գուլի	
Ստեփան էֆէնտի Փափազեան	

**ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ**

Առաքել էֆէնտի Արեւ-Տիւրքի	Արեւ-դէր
Մատթէոս էֆէնտի Արքաանեան	
Յակոբ էֆէնտի Արշակ	

**ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ**

Կարապետ Եպիսկոպոս Մերոփեան	Արեւ-դէր
Թաղէոս էֆէնտի Պէկեան	
Սահակ Ապրօ էֆէնտի	

**ՆԱԽՍՉԼՈՆՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ**

Յովհաննէս էֆէնտի Պոյաճեան	Արեւ-դէր
Մկրտիչ էֆէնտի Լուսեան	
Տօփթ-ը փէշարմալճեան էֆէնտի	

**ԻՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ**

Յարութիւն էֆէնտի Նորատունկեան	Արեւ-դէր
Ատովմ էֆէնտի Տէրոյնց	
Գարրիէլ էֆէնտի Գրասէրեան	

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ**

**ԲԱՅՈՒՄ 1878 ԱՄԻՆ**

**ՆԻՍՏ Զ.**

4 ՕԳՈՍՏՈՍ 1878

ՆԱԽԱԳԱՀ. — Ամենապատիւ Տէր Ներսէս Ս. Պատրիարք Հայր :  
 ԱՏԵՆԱՊԵՏ. — Տիգրան էֆէնտի Եուսուֆեան (Բ. Ատենապետ) :

**ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԵԱՆՔ**

ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԵԱՆՔ	ԱՏԵԱՐՀԱԿԱՆՔ (Ա. ՎԻՃԱԿ)	ԵՆԻԿՏՈՒՄ
ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ	Գ. 1-2-3-4-5-6-7-8-9-10-11-12-13-14-15-16-17-18-19	41 Չարեհ քերովրէ
1 Խորէն Արքեպ Նար Պէյ Բ Պ	21 Գրիգոր Պէրպէրեան Բ Պ	42 Մկրտիչ Քիւրքճիխանլեան
2 Կարապետ Եպ. Սերոբեան	22 Գ. Գրգ Սիմաբաճեան Բ 2	43 Պօղոս Ժամակոչեան
3 Մատթէոս Իզմիրլեան	23 Խաչիկ Մանկասարեան Բ Պ	44 Սեպուհ Մազսուտեան Բ 5
4 Ամբրոսիոս Վ. Ուրբինեան	24 Կարապետ Աղաբաճեան Բ 2	Ի-Կէ-դ-ը Ս. Խու
5 Գարեգին Բաթարեան Բ 2	25 Համբարձ. Մազպուլեան	45 Թաղէոս Պէկեան
6 Եղիշ Բապազունի	26 Մինաս Գափամաճեան	46 Սիմոն Ֆէլէկեան
7 Խորէն Կիրոյեանց Բ Պ	27 Յովհաննէս Պոյաճեան	47 Գարրիէլ Գրասէրեան Բ 5
8 Հմայեակ Գիմարեան	28 Մէլապուրեան Տօփթօր Բ	48 Ստեփան Ասլանեան Բ Պ
9 Յովհաննէս Փափազեան Բ	29 Պօղոս Պառնասեան Բ	Ի-Կէ-դ-ը Ս. Կար-դէր
10 Ներսէս Ասլանեան	30 Սարգիս Աղաբաճեան Բ	49 Մինաս Պահճէքափուլեան Բ
11 Պօղոս Խոլտամեան	31 Սահակ Ապրօ Բ 5	50 Պօղոս Թորգոմեան
12 Արտակ. Ք. Մամբրէն Բ 2	32 Սենեքերիմ Մանուկեան	51 Նիկողոս Ալաճաճեան Բ
13 Գէորգ Սրժրունի	33 Փէշարմալճեան Տօփթօր Բ 5	52 Տրդատ Փափազեան
14 Գրիգոր Ս. Սէլմեան	34 Բարթոլոմէ Գիւրքճիխանլեան Բ	(Գ. ՎԻՃԱԿ)
15 Խորէն Փէշարմալճեան Բ	35 Յովհաննէս Ֆէլէրճեան Բ	ԲԵՐ Լ Գ. 1-2-3-4-5-6-7-8-9-10-11-12-13-14-15-16-17-18-19
16 Յարութիւն Սերոփեան	36 Ատովմ Տէրոյնց	53 Արիկ Ունճեան
17 Յովհաննէս Մկրեան	37 Գէորգ Ապտուլլահեան Բ	54 Գրիգոր Սէյիմիյէճեան Բ
18 Սուքիաս Ստեփանեան	(Բ. ՎԻՃԱԿ)	55 Մարտիրոս Յ. Տիլլեան
19 Սահակ Տ. Սարգսեան	ՊԵՆԿԵՆԷ	56 Միքայէլ Մամիկոնեան Բ
Բ. Բացակայութիւն առաջին :	58 Անդրանիկ Կրճիկեան Բ	57 Նշան Քաղապեան Բ
Բ 2 Բացակայութիւն երկրորդ :	59 Ալեքսան Խորատունճեան Բ 2	58 Ստեփան Խնդիրեան Բ 2
Բ 3 Բացակայ. բանաւոր պատճա.	60 Խիսս Չայեան Բ 2	59 Տէլեմար Էքսէրճեան



ցույց նշանակուեցան ներկայորթեան տուժա-  
րին մէջ :

2.

**ԱՄԲԱՍՏԱՆԱԳԻՐ ՊԷԿԵԱՆ ԷՖԷՆՏԻՒ**

Յետադայ ամբաստանագիրը կարգաց-  
ուեցաւ , զոր մատուցած էր երեսփոխաննե-  
ներէն Պէկեան էֆէնտի :

Ատենապետիւ Ս. Պատրիարք Հայր  
Նախագահ Ազգային ժողովոյ .

Ի պատասխանի երկոտասան երեսփո-  
խանաց հարցապնդման , Ազգ. ժողովոյ վեր-  
ջին նստին մէջ Բ. Սրբազնութեանդ կողմա-  
նէ բերուած պատասխանին վրայ ըստ կա-  
նոնի կրնար անմիջապէս վիճարանութիւն  
բացուիլ (յօդ. 85) , և ըստ որում միշտ նա-  
խազմիւ կրնայ առաջարկուիլ (յօդ. 51) ,  
ուստի Ատենապետ փաշան նախազմիւ ա-  
ռաջարկեց . սակայն ատենապետը երբ  
խնդրոյ մը վրայ խօսիլ ուզէ կամ նախա-  
զմիւ առաջարկէ , ըստ կանոնի աթոռէն  
վար իջնելով իրրե երեսփոխան խօսիլ հարկ  
է , առանց մէյ մ'ալ ատենապետական ա-  
թոռին վրայ բազմելու , մինչև որ այն  
խնդիրն իր լուծումը գտնէ . (յօդ. 51.  
հրահանգ և յօդ. 20) :

Ատենապետ փաշան չյարգեց այս օրէն-  
քը , թէ' նախազմիւ առաջարկեց և թէ' իր-  
րե Ատենապետ աթոռին վրայ բազմելով  
ուզեց ատենանը կառավարել , յորմէ ծագե-  
ցաւ այն անհանգիստ և անիրաւ զէսքը , զոր  
անշուշտ կ'յիշէ Ձեր Բ. Սրբազնութիւնը , այն  
է' ատենապետին առաջարկած նախազմիւ  
ժողովին մերժել տալու համար իմ ատենա-  
բանած ժամանակս զիս խօսելէ դադրեցնե-  
լը , առանց յարգելու իմ խօսելու ազատու-  
թիւնս , որ ապահովեալ է Ազգ. սահմանա-  
դրութեամբ , որ ապահովեալ է միանգա-  
մայն ժողովը կառավարելու համար ատենա-

պետին ձեռքը տրուած կանոնադրութեան  
25երորդ յօդուածովը , որ կտրամագրէ թէ'  
և երբոր ատենաբան մը երկու անգամ ի խըն-  
դիր կոչուի մի և նոյն ճառին մէջ , ժողովը  
կրնայ' ատենապետին առաջարկութեանը վը-  
րայ արգիլել զանի խօսքէ նոյն խնդրին վրայ  
նոյն նստին մէջ : Իսկ ես որ' և ոչ մէկ ան-  
գամ ի խնդիր կոչուած էի նոյն նստին մէջ ,  
այլ երկու անգամ իսկ կոչուած ըլլայի ,  
դարձեալ չէր կրնար Ատենապետն ըստ կա-  
նոնի զիս խօսելէ արգիլել , այլ ժողովը մի-  
այն կրնար արգիլել , ինչպէս որ նոյն միջո-  
ցին դիտել տուի Ատենապետին , դիտել  
տուին նաեւ օրինասէր և արդարասէր երես-  
փոխանք ոմանք . սակայն անընդի եղաւ ձայ-  
ներնիս :

Անկէ ետք նախազմիւն քուէի դրուե-  
լով' երբ Ազգ. ժողովն մերժուեցաւ , մինչ-  
դեռ այնուհետեւ ըստ կանոնի կրնար անմի-  
ջապէս խօսք ու վիճարանութիւն ըլլալ (Յօդ.  
85) Ատենապետ փաշան դարձեալ խնդրոյն  
վրայ երեսփոխանաց խօսել չտուաւ հակա-  
ռակ կանոնադրութեան և խնդիրը նախա-  
քննութեան յղել տուաւ :

Արդ կրողքեմ Ատենապետ փաշային  
դէմ որ կանոնադրութեան 20, 23, 85երորդ  
յօդուածներուն հակառակ վարուեալովը , թէ'  
ազգային վրաւանց բռնաբարութիւն ըրաւ և  
թէ' իմ իրրե երեսփոխան խօսելու անբռ-  
նաբարելի իրաւունքս բռնաբարեց , որով և  
զիս անարգեց . միանգամայն կամբաստանեմ  
զինքը իր այդ հակականոնադրական վար-  
մունքին համար և ըրած անարգանացը հա-  
մար հատուցում կպահանջեմ . հետեւաբար  
կխնդրեմ Բարձր Սրբազնութենէդ' որ հաճի  
ներկայ բողոքագիրս ու ամբաստանագիրս  
Ազգ. ժողովին ներկայացնել , որպէս զի ըստ  
օրինի նկատողութեան առնու :

Մնամ Բ. Սրբազնութեանդ  
ամենախոնարհ ծառայ և

25 Յուլիս 1878 Ազգ. երեսփոխան  
Թ. Պէկեան

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը տեսնէք , տեարք  
երեսփոխանք , որ ամբաստանագիր մը կներ-  
կայանայ Մայր դիւանիս առաջին պաշտօնէին  
դէմ . ասոր վրայ որ և է կարծիք մը յայտ-  
նելէ առաջ պարտաւորութիւննիս է կարծեմ  
որ դիւանին որ կվերաբերի , անոր յղել ,  
որպէս զի տեղեկագիր մը բերէ , և այնուհե-  
տեւ վիճարանութեան ենթարկուի :

Եւ որովհետեւ խնդրոյն նիւթը կանո-  
նական է , Նախաձեռնութեան դիւանին կը  
պատկանի յղել : Սակայն եթէ զիտողութիւն  
ունեցող կայ , ըստ կանոնի երկու հոգի մէյ-  
մէկ անգամ թեր ու դէմ խօսելէ ետքը քը-  
ուէի պիտի դնեմ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ինչպէս որ նա-  
խորդ նստին ատենադրութեան վաւերացու-  
մը յաջորդ նստին մնաց , կառաջարկեմ որ  
այս ամբաստանութեան խնդիրն ալ իրր ա-  
նոր յարակից խնդիր' յաջորդ նստին մնայ :

ՊՕՅԱՃԵԱՆ Յ. ԷՖ. — Կը կրկնեմ :

ՇԱՀՊԱԶ Ն. ԷՖ. — Պէկեան էֆէնտի ամ-  
բաստանութիւնը նոյն իսկ Ատենապետ փա-  
շային դէմ է , որ այսօր ներկայ չէ . ըստ իս'  
այս ամբաստանագիրը պէտք է յղուի նախա-  
քննիչ դիւաններէն անոր' որուն որ կպատ-  
կանի , և անոր տեղեկագիրը գալէ ետեւ' Ա-  
տենապետ փաշային ներկայ գտնուած պա-  
հուն նկատողութեան առնուի :

Տ. ՄԱՏԹԷՆՈՍ ԵՊԻՍ. — Պէկեան էֆէն-  
տի ամբաստանութիւնն ատենադրութեան  
հետ կապակցութիւն չունի , իրրե զատ խըն-  
դիր կրնայ այժմէն նկատողութեան առնուիլ  
միայն թէ Ատենապետ փաշան' որուն դէմ  
է ամբաստանութիւնը , ներկայ չէ այսօր .  
ուստի Շահպազ էֆէնտի ըսածին պէս' պէտք  
է այժմէն նախաքննութեան յղուի , և տե-  
ղեկագիրը գալուն' Ատենապետ փաշայի ներ-  
կայութեան վիճարանութեան դրուի :

Պէկեան էֆէնտին խօսք ուզեց բայց Ա-  
տենապետ էֆէնտին մերժեց ըսելով , թէ

այս կէտին վրայ ինք կարծիք չի կրնար յայտ-  
նել : Եւ ըստ օրինի այս ամբաստանագիրն  
Նախաձեռնութեան դիւանին յղումը քուէի  
դնելով ժողովն միաձայնութեամբ ընդուն-  
ուեցաւ :

3.

**ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՄԱՐԱՎԱԼՈՒԹԵԱՆ  
ԴԻՒԱՆԻՆ**

Կարդացուեցաւ յետադայ տեղեկագիրն  
որ Համարակալութեան դիւանէն եկած էր :

Վսեմաշուք Ատենապետ փաշա Ազգա-  
յին ժողովոյ .

Պատրիարքարանի պաշտօնէից թոշակաց  
անբաւականութեանը մասին Պատկառելի ժո-  
ղովոյդ կողմէ Համարակալութեան դիւանիս  
յղեալ վարչութեան Քաղ. ժողովոյ մէկ ա-  
ռաջարկը նկատողութեան առնելու համար ,  
Դիւանս տեսնելով որ հարկ անհրաժեշտ է  
աշաց առջեւ ունենալ կեդր. սնտուկին ներ-  
կայ տարւոյ հաշուեցոյցն , որ տակաւին ներ-  
կայացած չէ Ազգ. ժողովոյ . բայց ներկայ  
ձախող հանգամանաց առջեւ իւրեանց ամ-  
սաթոշակաց անբաւականութեան պատճա-  
ռաւ վերոյիշեալ պաշտօնէից վիճակն ալ ի  
նկատի առնելով , Դիւանս հարկ և արժան  
կհամարի Քաղ. ժողովոյ առաջարկն ընդու-  
նիլ եթէ կեդր. սնտուկին վիճակը ներէ :

Մնամք խորին յարգանքք անդամք  
Համարակալութեան դիւանի  
Ատենապետ  
Ա. Ա. Տէրէ

Յ. Աւուր Մ. Աւուր

**ԱՅԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Ինչպէս լսեցիք Տեառք, ասկէ առաջ Քաղ. Ժողովոյ կողմանէ Պատրիարքարանի պաշտօնէից Թողակաց անբաւականութեանը մասին եկած առաջարկութիւնը յղուեր է Համարակալութեան ղիւանին, որն որ յիշեալ առաջարկութեան ընդունուելը կը տեղեկագրէ: Պէտք է ուրեմն ըստ կանոնի, օրակարգն անցնի և այնպէս վիճարանութեան ենթարկուի:

Ժողովն որոշեց յաջորդ նստի օրակարգն անցընել:

**ԱՅԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Հիմա ժողովրդական աղերսագիր մը բերին ղիւանիս, որոյ ստորագրութիւնները վաւերացուած են Սամաթիոյ Թաղ. Խորհրդէն, և որոյ պարունակութիւնն է Ազգ. Հիւանդանոցի մատակարարութեան գէժ դանգատ. բայց չսխտի կրնանք կարգալ, որովհետեւ չէ տոմարագրեալ Ազգ. ղիւանատունէն, ինչպէս օրէն է. ուստի եթէ Ժողովը կհամի, կյանձնեմ ղիւանապետ էֆէնտիին, որ տոմարագրելէ ետեւ յաջորդ նստին ներկայացնէ:

Ժողովն ընդունեց առանց դիտողութեան:

**Օ Ր Ա. Կ Ա Ր Գ**

**Ա.**

Ամբողջացում ընտրութեան կրօնական ժողովոյ

Ատենապետ էֆէնտին՝ ժողովին ներկայացուց, անցեալ շաբթու Յուլիս 21ին կատարուած կրօն. ժողովոյ ընտրութեան քուէհամարին յետագայ արդիւնքը.

**Ա Ր Գ Ի Ի Ն Ք**

Տ. Մկրտիչ Ս. Արքեպիս. Խորիմեան	Քուէ	48
Տ. Խորէն	Նար—պէյ	41
Տ. Սահակ քահանայ Տ. Սարգսեանց		37
Տ. Գարեգին վարդ. Թաթարեան		42
Տ. Արիստակէս Գահանայ Մամրէեան		35
Տ. Մատթէոս Ս. եպիսկ. Իջմիրեանց		34
Տ. Խորէն քահանայ Փէհլիվանեան		34
Տ. Ամբրոսիոս վարդ. Ռուբինեան		31

1878 Յուլիս 21

**Ա Ր Գ Ի Ի Ն Ք Հ Ա Մ Ե Մ Ա Տ Ա Վ Ա Ն**

1. Տ. Սուքիաս քահ. Ստեփաննոսեան	Քուէ	27
2. Տ. Կարապետ եպիս. Սերովբեան		26
3. Տ. Եղնիկ վարդապետ Ապահունի		28
4. Տ. Հմայեակ	Դիմաքսեան	25
5. Տ. Ներսէս	Սրսլանեան	28
6. Տ. Պօղոս	Խօլտամեան	27
7. Տ. Արիստակէս քահ. Զիլվէճեան		25
8. Տ. Իգնատիոս վարդ. Շիշէճեան		24
9. Տ. Եղիշէ քահ. Սէրէնեանց		24
10. Տ. Յարութիւն եպիս. Յովհաննէսեան		24
11. Տ. Սիմոն	Սէֆէրեան	25
12. Տ. Գրիգոր	Տ. Պօղոսեան	24

1878 Յուլիս 21

**Հանդիսատես**

Եւնիէ Էմբրոսիոս Աղ—հանէ	Վ—ն Թորգոսեան	Վ—ն Թ. Աբր—ն
Յ—ն Էմբրոսիոս	Մ—ն Թ. Մեւիսեան	Մ—ն Թ. Մեւիսեան
Մ—ն Էմբրոսիոս	Յ—ն Թ. Մեւիսեան	Մ—ն Թ. Մեւիսեան

Նոյնպէս ներկայացուց նոյն օրը կատարուած Քաղ. Ժողովոյ ընտրութեան քուէհամարին յետագայ արդիւնքը.

**Ա Ր Գ Ի Ի Ն Ք**

Սթիմարաճեան էֆէնտի.	40
Մանիկեան Ս.	35
Գըլճճեան Գ.	50
Այրսանեան Մ.	48
Գարակէօղեան Գ.	46
Պէյլիկեան Ս.	55
Հալաճեան Բ.	42
Չօլանեան Յ.	34
Յրէնկեան Մկրտիչ	58
Ղազարոսեան Սահակ	58
Գրիգորեան Ռուբէն	29
Հազարեան Կարապետ	49
Կիւմիւշկէրտան Տիգրան	32
Ռաֆայէլեան	50

21 Յուլիս 1878

**Ընթերցող քուէից**

Մ—ն Էմբրոսիոս	Յ—ն Էմբրոսիոս	Մ—ն Էմբրոսիոս
Գ. Յ. Մեւիսեան	Վ—ն Պօղոս	Թ—ն Էմբրոսիոս
Վ—ն Էմբրոսիոս	Մ—ն Էմբրոսիոս	Յ—ն Էմբրոսիոս
Վ—ն Պօղոս	Մ—ն Էմբրոսիոս	Յ—ն Էմբրոսիոս

Ատենապետ էֆէնտին յայտարարելով որ Քաղաքական ժողովոյ 14 անդամոց ընտրութիւնն ամբողջացած է արդէն քուէից բացարձակ առաւելութեամբ, հրաւիրեց ժողովը սոյն ընտրութիւնը վաւերացնել:

Ժողովը ձեռամբարձ և միաձայն հաւանութեամբ վաւերացուց Քաղ. ժողովոյ ընտրութիւնն, ուստի և Քաղ. ժողովոյ անդամ հռչակուեցան հետեւեալք.

Բարսեղ	էֆ	Հալաճեան
Գէորգ		Սթիմարաճեան
Գէորգ		Քըլճճեան
Գրիգոր		Քարակէօղեան
Կարապետ		Հազարեան

Մատթէոս	էֆ	Այրսանեան
Մկրտիչ		Յրէնկեան
Յակոբ		Չօլանեան
Ռուբէն		Գրիգորեան
Սահակ		Ղազարոսեան
Սենեքերիմ		Մանուկեան
Ստեփան		Պէյլիկեան
Տիգրան		Կիւմիւշկէրտան
Տօբատ	Ռաֆայէլեան	էֆէնտի

Նոյնպէս Ատենապետ էֆէնտին յայտարարելով որ կրօնական ժողովոյ 14 անդամներէն միայն 8 բացարձակ քուէից առաւելութեամբ ընտրուած են, մնացեալ 6 ին համարակալութեան քուէարկութիւնն ընելու համար հրաւիրեց ժողովն որ ներկայացեալ կրկնապատիկ թուով ընտրելեաց ցանկին մէջէն 6 անդամոց համար քուէնին պատրաստեն:

Ուստի անմիջապէս քուէարկութիւնն սկսաւ, և քուէհամարի համար քննիչ ընտրուեցան վիճակաւ.

Տէր Գէորգ	Քահանայ	Արժրուհի
Տէր Գրիգոր		Աճէմեան
Քրիստոստուր	էֆէնտի	Ղազարոսեան
Պետրոս		Միսաքեան

Քուէհամարը կատարուելով հետեւեալ արդիւնքն ունեցաւ.

Թիւ քուէարկուաց	35
սնարապ քուէ	2
	51

Գրիգոր	Եպիս.	Տէր Պօղոսեան	քուէ	25
Կարապետ		Սերովբեան		59
Յարութիւն		Յովհաննէսեան		11
Արմէօն		Սէֆէրեան		21
Եղնիկ	վարդա.	Ապահունի		29
Իգնատիոս		Շիշէճեան		28
Հմայեակ		Դիմաքսեան		28
Ներսէս		Ասլանեան		57
Պօղոս		Խօլտամեան		26

Արիստակէս քահան. Ճիզմէճեան	»	23		
Եղիշէ	»	Սէրէնեան	»	15
Սուքիաս	»	Ստեփանոսեան	»	24

Հետեւապէս՝ ըստ կարգի առաւելու թեան քուէից ընտրուեցան՝

կարապետ Եսր. Սերովբեան	քուէ	39		
Ներսէս Վարդ. Ասլանեան	»	37		
Եղիշէ	»	Ապահունի	»	29
Հմայեակ	»	Դիմաքսեան	»	28
Պօղոս	»	Խօլտամեան	»	26
Իգնատիոս	»	Շիշէճեան	»	28

Այսպէս կրօնական ժողովոյ ընտրութիւնն ալ ամբողջանալով, ժողովն Ատենապետ էֆէնտիին հրաւիրանաց համաձայն՝ ձեռամբարձ և միաձայն հաւանութեամբ վաւերացուց նաեւ կրօն. ժողովոյ ընտրութիւնն. ուստի և կրօն. ժողովոյ անդամ հռչակուեցան հետեւեալք.

Տ. Մկրտիչ Ո. Արքեպիս. Խրիմեան		
Տ. Խորէն	»	Նար—Պէյ
Տ. կարապետ	»	Ուրովբեան
Տ. Մատթէոս	»	Իզմիրլեան
Տ. Ամբրասիոս Վրդ. պ.	»	Ռուբինեան
Տ. Գարեգին	»	Թաթարեան
Տ. Եղիշէ	»	Ապահունի
Տ. Իգնատիոս	»	Շիշէճեան
Տ. Հմայեակ	»	Դիմաքսեան
Տ. Ներսէս	»	Ասլանեան
Տ. Պօղոս	»	Խօլտամեան
Տ. Արիստակէս Քհնյ.	»	Մամբրէեան
Տ. Խորէն	»	Փէհլիվանեան
Տ. Ոահակ	»	Տէր Սարգսեան

Բ

Ընտրութիւն Նախաքննիչ յանձնախումբի Հայկական խնդրոյ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Օրակարգը կը պահանջէ որ նախաքննիչ յանձնախումբին ընտրութիւնը կատարենք. յանձնախումբի ընտրութեան վրայ կանոնադրութիւնը կըսէ թէ զիւրեանը սրբագրելի ցանկ մը կը պատրաստէ և անոր վրայ պիտի կատարուի ընտրութիւնը : Եթէ զիտողութիւն ընող չկայ՝ կսկսինք ընտրութեան :

Պէկեան Թ. էՖ. — Կանոնական դիտողութեան համար խօսք կուզեմ :

Յանձնախումբ մ'ունինք ընտրելիք, բայց պէտք է նախապէս զիտնալ թէ ի՞նչ է իր պաշտօնը. ատենապետ էֆէնտիին կըսէ թէ զեղշելի ցանկին վրայ պիտի ըլլայ ընտրութիւնը, այնպէս կարծելով թէ նախաքննիչ զիւան մ'է ընտրուելիքը. սակայն նախաքննիչ զիւան չէ ընտրուելիքը, մեք արդէն ունինք նախաքննիչ զիւաններ. այլ որովհետեւ ժողովն իրաւունք ունի ըստ կանոնի յանձնաժողովներ կարգել որ և է խնդրոյ քննութեան համար, մեր ընտրելիք յանձնաժողովն ալ այս կարգէն է. միայն թէ նախ ցուցեք ի՞նչ է յանձնաժողովին պաշտօնը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Պէկեան էֆէնտի սըխալ հասկցաւ. ես չըսի թէ զեղշելի ցանկի վրայ պիտի ըլլայ ընտրութիւնը, այլ սրբագրելի ցանկի վրայ, ինչպէս կանոնը կը տրամադրէ : Գալով Պէկեան էֆէնտիին այն հարցման թէ յանձնախումբին պաշտօնն ի՞նչ է, կը պատասխանեմ թէ նախորդ նստին ներկայ չէի և չգիտեմ թէ յանձնախումբն ի՞նչ պաշտօնով ընտրել որոշուած է. սակայն հիմա խնդիրը յանձնախումբին պաշտօնին վրայ չէ, ընտրութեան ձեւին վրայ է. նախ՝ այս մասին կարծիքնիդ յայտնեցէք :

Պէկեան Թ. էՖ. — Առանց պաշտօնը զիտնալու չենք կրնար ընտրութեան եղանակին վրայ բան մ'ըսել : Նախ՝ յանձնախումբը քննիչ է թէ նախաքննիչ, որոշակի չգիտենք. մեզի եկած հրաւիրագրին և լրացրաց մէջ հրատարակուած օրակարգին մէջ այս մասին տարբերութիւն կայ. ինծի պէս ուրիշ երեսփոխաններ ալ կան՝ որոնք տարակուսի մեջ են այս կէտին վրայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Գարձեալ կըսեմ, Պէկեան էֆէնտի, ձգեցէք այդ կէտը ետքի. ընտրութեան ձեւին վրայ խօսք առիք և հիմա եւեր ուրիշ կէտերու վրայ քննութիւններ կընէք. այս կերպով վիճարանութեան կարգը կխանգարի, և ես թոյլ չեմ կրնար տալ որ վիճարանութիւնն իր բուն սահմանէն շուրս ելնէ :

Տ. ԱՄԲՐԱՍԻՈՍ Վ.ԱՐԳ. — Երկուք եղաւ որ Պէկեան էֆէնտիին կընդմիջէք. կաղաչեմ այս վերջինն ըլլայ, թոյլ տուք Պէկեան էֆէնտիին որ շարունակէ և աւարտէ իր ըսելիքը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը խնդրեմ որ ուրիշները միայն մտիկ ընեն և չմիջամտեն զիւանին ու ատենաբանին մէջ տեղ, որպէս զի խնդիրները չիճճոտին և չուտ վերջանան : Պէկեան էֆէնտիին յանձնախումբին ընտրութեան մասին խօսք առնելէ ետեւ անոր պաշտօնին և այլ հանդամանաց մէջ մտաւ և ուղեց ըսել թէ սա կամ նա պակասութիւններ կան. թերեւս իրաւ ըլլայ, սակայն խօսքին կարգը հիմա ատոնց չվերաբերիր : Նախ՝ ընտրութեան ձեւին վրայ պէտք է խօսուի. այս պայմանին մէջ կրնայ Պէկեան էֆէնտիին խօսիլ եթէ շարունակել կուզէ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Խօսք կուզեմ, կանոնական դիտողութիւն պիտի ընեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսքը փափազեան էֆէնտիին է :

Պէկեան Թ. էՖ. — (Ինչո՞ւ չոր է՞նք) Պիւանն այս երրորդ անգամ անպատուութիւն կընէ ինձ, խօսքիս թելը կտրելով և ուրիշին տալով. կրողքեմ վերստին ինձ եղած այս անպատուութեանց դէմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Պէկեան էֆէնտի, միայնպէս յուզեալ խօսիք. դիւանն երբէք չընդունիր որ և է երեսփոխանի մը ոչ անձին և ոչ պաշտօնին դէմ անպատուութիւն ընել : Փափազեան էֆէնտի կանոնական դիտողութիւն ունիմ ըսաւ, և ըստ որում կանոնական դիտողութիւն ունեցողն առաջնութիւն կառնու, այս պատճառաւ խօսքն անոր տրուեցաւ : Ասոր մէջ նեղանալու բան մը չկայ :

(Երկուքսն ալ՝ ուրիշ)

ԱՄԱՍԵԱՆ Յ. ԷՖ. — Կարծեմ դիւանը համոզուելով որ առանց յանձնախումբին պաշտօնը զիտողուելու ընտրութեանը վրայ վիճարանութիւն չկրնար ըլլալ, այս նպատակաւ հրաւիրեց վերստին Պէկեան էֆէնտիին խօսելու, ուստի զայն բեմէն վար առնելու իրաւունք մը չեմ տեսներ : Ըստ իմ աւելի լաւ կընէր դիւանն ասանկ պարագայի մը մէջ ժողովին կամքն հարցնել և ըստ այնմ վարուիլ, որպէս զի մանր մունր վէճերով ժամանակ շանցնի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ներեցէք որ պարզեմ Եղեղութիւնը ի՞նչ ալ ծիլք ձեր նպատակին համեմատ վարուեցայ. որովհետեւ երբ Պէկեան էֆէնտիին թոյլ տուի խօսքը շարունակելու, միայն փափազեան էֆէնտիին էր որ ելաւ կանոնական դիտողութիւն ունիմ ըսաւ. կանոնական դիտողութիւնը պարտք էր լսել. այսու ամենայնիւ ես Պէկեան էֆէնտիին չըսի որ բեմէն իջնայ. վասն զի կանոնական դիտողութիւն ընելու համար փափազեան էֆէնտիին բեմն եղնելու պէտք չունէր :

ՇԱՀՊԱՋ Ն. ԷՖ. — Ես ալ խօսք ուզած եմ, և պիտի խօսիմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Ըրբեմն կը զարմանամ թէ, ես այսպէս կանոնադրութեան համաձայն ատենաճարած միջոցիս, ինչ զիտմամբ Պէկեան էֆէնտին ինքն իրեն բեմէն իջնալով կը բողոքէ և այս միջոցէ պը կը յարուցանէ: Այսու ամենայնիւ ես առանց նկատողութեան ատենելու այդ բողոքը խօսքը նախ փափազեան էֆէնտին պիտի տամ վտան զի կանոնը այնպէս կը պահանջէ, և յետոյ ժողովին պիտի հարցնեմ:

ՓԱՓԱՋԱՆ Ս. ԷՖ. — Եթէ անցեալ նստին ատենագրութիւնն այսօր վաւերացուէր, յանձնարարին պաշտօնին վրայ այժմ այս վիճարանութիւնը տեղի չէր ունենար և անոր ընտրութիւնն ալ, քանի որ ատենագրութեան վաւերացումը յաջորդին մնաց, յանձնարարի ընտրութիւնն ալ պէտք է մնայ որչափ մը՝ որ չզիտենք թէ ատենագրութեան մէջ ճիշդ նշանակում է թէ չէ, այսօր գործադրելու կելնենք: Ըստ իս այս վիճարանութիւնն ուրիշ բան չէ, այլ ատենագրութեան վաւերացման խնդիրն է, ուստի աղէկ կընենք որ նախ ատենագրութեան վաւերացման խնդիրը ձեռք առնուք, որպէս զի յանձնարարին պաշտօնն ալ ճշդաբ և հասկցուի թէ արդեօք ամբաստանութեան քննութիւնն ալ անոր յանձնուած է. այն ամբաստանութեան՝ որ Պէկեան էֆէնտին կողմէ եղած է նախընթաց նստին մէջ ընդդէմ Ս. Պատրիարք Հօր: Ատենագրութեան վաւերացման խնդրով կատուգուի նաև թէ այն խօսքերն՝ որ արձանագրեալ են յանուն Պէկեան էֆէնտին՝ ճիշդ են արդեօք թէ սրբազրութեան կարօտ: Ես որ նախընթաց նստին ներկայ չէի, այդ խօսքերուն պատասխան ունիմ զոր կը վերապահեմ ատենագրութեան վաւերացման պահուն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Հիմա կը տեսնէք որ փափազեան էֆէնտին ալ կանոնական դիտողութիւն ունիմ ըսելով ճամբայ ելաւ և բուն խնդրոյն մէջ մտաւ, նա ալ Պէկեան էֆէնտին հետ միևնոյն սխալման մէջ գլորեցաւ, փափազեան էֆէնտին ըսածները չէ թէ կանոնական դիտողութիւն էին, այլ Պէկեան էֆէնտին կողմէ նա յանձնարարի պաշտօնին բացատրութեանը մէջ մտնել, Աստի պէտք է նախ Պէկեան էֆէնտին իւր առաջարկութիւնը պաշտպանէ և յետոյ փափազեան էֆէնտին պիտի տեսնախօսանէ. ուրիշ բան է եթէ Պէկեան էֆէնտին ուզէ ձայնակցիլ փափազեան էֆէնտին այն առարկութեան թէ նախորդ նստի ատենագրութեան վաւերացմամբ այս միջոցէ պը ինքն իրեն կը փակուի վտան զի մասնատուութիւն պաշտօնը հոն բացարձակաբար դրուած ըլլալուն, ալ անոր վրայ վիճարանութեան տեղի չի մնար: Աստի հիմա որ խօսքը Պէկեան էֆէնտինն է. լաւ կընէ եթէ յօժարի նախ այս առաջարկութեան պատասխանել:

ՄԵԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Զարմանալի է որ մինչ զիւանը մէկ կողմէ փափազեան էֆէնտին խօսքը կանոնական դիտողութիւն չէ կըսէ, միւս կողմէ հրաւեր կը կարդայ Պէկեան էֆէնտին պատասխանել այն ոչ կանոնական դիտողութեան:

ՇԱՀՊԱՋ Ն. ԷՖ. — Եթէ խօսքը միջանկեան ըրու է, ես ալ խօսք ուզած եմ. պիտի խօսիմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մէլքեան էֆէնտին եթէ աղէկ ուշադրութիւն ընէր իմ խօսքերուն՝ այս դիտողութիւնը չէր ընէր. նախ պէտք է գիտնալ թէ յանձնարարի ընտրութիւն մը կայ կատարուելիք, խօսքն ասոր վրայ է, նախորդ նստին այնպէս որոշուած է. թէ և ես ներկայ չէի:

Տ. ՍՄԵՐՈՍԻՈՍ ՎԱՐԴ. — Դուք Ատենագրութեան էֆէնտին, նախորդ նստին ներկայ ըլլալով տեղեկութիւն չուէիք այս կէտին վրայ

ուրեմն ինչու թոյլ չէք տար Պէկեան էֆէնտինն՝ որ կուզէ լուսարանել այս կէտս, ժամ մ' եղաւ որ ունայն վէճերով կգրադինք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Նախ կանոնադրութեան դէմ է Ատենագրութիւն խօսքը ընդմիջել կը խնդրեմ ուրիշ ատեն մի՛ ընէք, երկրորդ՝ եթէ քիչ մը համբերութիւն ունենայիք ձեր դիտողութեան տնտեսի ըլլալը պիտի տեսնէիք:

Ամիտիենք ուրեմն. նախորդ նստին մէջ որոշուած է նախաքննիչ յանձնարումը մ' ընտրել. Պէկեան էֆէնտին ընտրութենէն առաջ խօսք կուզէ. եթէ ժողովը կհամար թող խօսի, տեսնենք թէ ո՛ր պիտի եղերի իր խօսքն:

(հաւանութեան ցոյցեր)

ՇԱՀՊԱՋ Ն. ԷՖ. — Այս այդ նիւթին վրայ ես ալ պիտի խօսիմ, Պէկեան էֆէնտին խօսք ուզելուն վրայ է իմ խօսքս. ինչպէս փափազեան էֆէնտին միջանկեալ կերպով խօսեցաւ և ժողովն ունկնդիր եղաւ անոր, նոյն օրինակաւ ես ալ պիտի խօսիմ յաւելուածով մը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ներեցէք՝ Շահպազ էֆէնտին, կարգը ձերը չէ, Պէկեան էֆէնտինն է. եթէ փափազեան էֆէնտին թոյլտուութիւն եղաւ, կանոնական դիտողութիւն ունիմ ըսելուն համար է, երբ նա խօսքն աւարտեց, ըսի թէ կանոնական դիտողութիւն չէր, այլ խնդրոյն վերաբերեալ էր: Աստի մի՛ աճապարէք կը խնդրեմ, կարգերնուդ սպասեցէք, վասն զի կանոնական դիտողութիւն չուենալնիդ կը տեսնեմ: Խօսքը Պէկեան էֆէնտինն է:

ՊԵԿԵԱՆ Թ. ԷՖ. — Գիտէք, տեսաք երեսփոխանք՝ թէ ինչ է այսչափ յուզմանց պատճառն, ըսեմ ձեզ. ամեն անգամ որ ժողով մը կամ անհատ մը ուղիղ ճանապարհէն կտատորի, միշտ դժուարութեանց կը

հանդիպի. անցեալ նստին ուղիղ ճամբէն խտորեցանք և ահա այսօր մեր այն ըրածովը կտուժենք:

Կանոնադրութիւն մ' ունինք, որուն 82-երորդ յօդուածը կըսէ. « ո՛ր ժամանակ ըլլայ՝ երեսփոխան մը կրնայ հարցապնդում ուղղել Վարչութեան որ և է մասին կամ Պատրիարք Արաղանին. բայց գրաւոր պէտք է տայ իր այդ խնդրանքն ատենագրութիւն »: Եւ 83 երորդ յօդուածը կըսէ. « Վարչութեան անդամներէն անի՛ որում անկէ պատասխանել, իր կարծիքը տալէն ետքը, ժողովը կվճուէ ձեռամբարձով առանց վճի՛ մի թէ կամի՛ լսել այդ հարցապնդումը, և կորուչէ օրը »:

Արդ՝ այդ հարցապնդումն եղաւ 12 երեսփոխանաց կողմէ, ժողովին կամքը հարցուեցաւ որ ուզեց լսել. Պատրիարքին դրուելուց և որ որոշուեցաւ լսելու. ըսել է թէ քանի որ օրն որոշուած էր. ժողովը Պատրիարքին պատասխանը լսելէ ետև կրնար վիճարանիլ, և ինչպէս կանոնը կըսէ, այդ հարցապնդման միջոցէ պը գոցուելէն ետև ժողովը կը դառնայ իր օրակարգին:

Բայց անցեալ նստին այսպէս չեղաւ՝ ընդհակառակն ճիգ թափուեցաւ նախազնուով խնդիրը դուրս ձգելու. Ատենագրութեան վաւերացման շնորհաբար որ երեսփոխանութիւնն իր իրաւունքը գործադրէ. մինչդեռ Պատրիարքն թողէք՝ ըսաւ՝ Պէկեանին, որ խօսի. Ատենագրութեան փաշան մի՛ միջամտէք ըսելով չը թողուց, և չը թողելուն պատճառն է որ խնդիրն այս վիճակին հասաւ, թերևս նոյն օր պիտի վերջանար. իսկ ատենագրութեան կողմէն երբ տեսաւ որ կանխազնուով դուրս նետելը չպիտի յաջողի, նախաքննութեան յղելու խնդիր յարոյց, իբր թէ նոր խնդիր մ' ըլլար և նախաքննութեան յղելու պէտք մ' ունենար, մինչդեռ այնպէս չէր: Հուսկ յետոյ փոխանակ նախաքննիչ դիւաններէն մէկուն յղուելու՝ մասնաժողով կարգել կորոշուի: Մասնաժողովին պաշտօնը քննութիւնն է, նախաքննութիւնն է, ինչ է, յայտնի չէ. վասն զի մեզ հրաւիրագիր մ' եկած է. ուր քննիչ

յանձնաժողով գրուած է, իսկ լրագրաց մէջ հրատարակեալ օրակարգը նախաքննիչ է կրօն-երեսփոխաններէն շատերը չփութած են և իրարու կհարցնեն թէ յանձնաժողովին պաշտօնն իրօք քննութիւն է թէ նախաքննութիւն: Այսպէս ժողովը սխալ դրութեան մը մէջ ինկած է աստեղապետ փաշային օրինաց համեմատ չվարուելով՝ որուն դէմ բողոքեցի:

Պահ մ'առաջ պաշտօնակիցներէս միոյն կողմէ ճամբարութիւն մը խօսուեցաւ ըսելով թէ քանի որ ատենագրութիւնը չվաւերացուցինք՝ յանձնաժողովի ընտրութիւնն ալ չենք կրնար ընել. ճամբարութիւն մ'էր այս, վասն զի ատենագրութեան այն մասը վաւերացնելէն կախեալ է յանձնաժողովին պաշտօնը սահմանել: Հիմա ժողովին կը մնայ որոշել թէ պէտք է արդեօք ատենագրութիւնը վաւերացնել և յետոյ յանձնաժողովին ընտրութիւնը կատարել:

Ըստ իմ կարծեաց՝ յանձնաժողովին ընտրութեան 15 օր ետքի մնալն կրնայ օգտակարութիւն ունենալ. զի երբ անցեալ նստին պիտի ընտրէինք և ժամանակը շնորհեց, տակաւին Պէրլին գացող Ազգային պատգամաւորներն եկած չէին, այսօր մէկ մասն եկած են. կմնայ մէկն, որ չէ եկած, այն ալ գայ աղէկ կըլայ, որպէս զի անկէ ալ լոյս առնուի: Աստի ես կառաջարկեմ որ յանձնաժողովին ընտրութիւնն ատենագրութեան վաւերացման հետ մնայ յաջորդ նստին:

Ասոր հետ մէկտեղ պատգամաւոր Խորէն Սրբազանի ժամ յառաջ գալն ալ անհրաժեշտ կը գտեմ:

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Ուրեմն, Պէկեան էֆէնտի, դուք ալ ըսել կուզէք թէ ընտրութիւնը յանձնախմբին պաշտօնը նախաքննութիւն է:

**Պէկեան Էֆ.** — Այդպէս ընդունուած ըլլալը կամ չըլլալը ատենագրութեան վաւերացումէն պիտի յայտնուի, Ատենապետ փաշային նոյն օրուան յայտարարութեանը նայելով յանձնախմբին պաշտօնը նախաքննութիւն է:

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Պէկեան էֆէնտի դիտողութիւն մ'ըրաւ, որում իբր ատենագրութիւն ինձ կպատկանի պատասխանել: Ըսու թէ հրաւիրագրաց մէջ քննիչ յանձնախմբու և լրագրաց զրկուած օրակարգին մէջ նախաքննիչ յանձնախմբու գրուած է, և հարցուց թէ այս երկուքին ո՞րն է ստոյգը: Հրաւիրագրերն զրկուելէ առաջ ես չեմ տեսած, իսկ լրագրաց զրկուածն ես կտեսնեմ և կըստորագրեմ սովորաբար. պէտք էր որ դիւանապետ էֆէնտին հրաւիրագրերը զրկելէ առաջ անգամ մը ինձ ցոյց տար, ինչպէս կ'ընէր մինչեւ հիմա, բայց որպէս և է այս անգամ անուշադիր գտնուեր է և հրաւիրագրաց մէջ քննիչ յանձնաժողով գրելով զրկեր է: Իսկ ես լրագրաց զրկուած օրակարգին մէջ նախաքննիչ յանձնախմբու գրած և ստորագրած եմ: Այս է ժողովին որոշածն, և դիւանին գործադրածը:

**ՇԱՀՊԱՋ Ե. ԷՖ.** — Հարկադրեցայ խօսք ուզել և անկարգ խօսիլ:

(Անմիջապէս ընդմիջեցին Տ. Ամբրոսիոս վարդ. և Պէկեան էֆէնտի, բողոքելով թէ Շահպազ էֆէնտի այդ անարգ բառն արտասանելով՝ բեմը կպզծէ: Ատենապետ էֆէնտին բացատրեց, թէ Շահպազ էֆէնտի այդ բառովն ըսել ուզեց թէ խօսից կարգէն դուրս կխօսի, և նոյն իսկ Շահպազ էֆէնտի ալ հաստատեց:)

**ՇԱՀՊԱՋ Ե. ԷՖ.** — (Շորտակելով) Ասկէ երկու նիստ առաջ 12 երեսփոխանաց կողմէ ստորագրեալ հարցապնդում մը տեղի ունեցեր է Հայկական խնդրոյն վրայ. իմաստը կրկնելու հարկ չկայ, վասն զի ամենուր ծանօթ է. այդ հարցապնդումը Ս. Պատրիարքին զրկեր և պատասխանը նախորդ նստին՝ ուր ես ներկայ չէի, հոս եկեր կարդացուեր է, և երեսփոխանի մը կողմէ դիտողութիւններ եղեր են. ատենագրութիւնը հիմա ձեռք հասնելով և փոքր ի շատէ կարդալով տեղեկացայ որ վերջապէս այս մասին որոշում մը

եղեր է, այն է նախաքննիչ մասնախմբու մը ընտրել 5 եկեղեցական և 5 աշխարհական անդամներէն բաղկացեալ, բայց օրը տարածամած ըլլալուն՝ ընտրութիւնը մնացեր է այս նստին, և օրակարգն անցեր է: Հիմա դիւանն ըստ օրակարգին՝ երբ այս յանձնախմբին ընտրական գործողութեանը պիտի ձեռնարկէ, կտեսնենք որ Պէկեան էֆէնտի մէկ կողմէ, և Փափաղեան էֆէնտի միւս կողմէ, պակասութիւն բառն ստեղծ կրկնելով առարկութիւններ կընեն, որպէս թէ յանձնախմբին պաշտօնը սահմանուած չէ արդէն, մինչդեռ ես կտեսնեմ ատենագրութեան՝ որ նստին մէջ յանձնախմբին ունենալիք պաշտօնին վրայ ըստ բաւականին խօսուած և որոշուած եղած է: Ըստ իս՝ պակասութիւն մը եթէ կայ՝ այն է որ անցեալ նստին ատենագրութիւնն ուլ հասնելով, այսօր անոր վաւերացումն ետ մնաց. եթէ այս չըլլար՝ ամենեւին այս վիճարանութիւնները տեղի չը պիտի ունենային, և անմիջապէս յանձնախմբի ընտրութիւնը պիտի կատարուէր: Պէկեան էֆէնտի յանձնախմբի պաշտօնին վրայ դիտողութիւն ունիմ ըսելով խօսելու սկսաւ, նախ՝ պաշտօնը սահմանել և ապա ընտրութիւն կատարել սահմանել, և իր դիտողութիւնը հոն բերաւ յանդեցուց թէ իր խօսելու ազատութեանը դէմ բռնարարութիւն եղած է: Իսկ Փափաղեան էֆէնտի կարծիք յայտնեց թէ քանի որ նախորդ նստին ատենագրութիւնը չէ վաւերացած, պէտք է մնայ նաև յանձնախմբին ընտրութիւնը: Ես ալ այս մասին համաձայն եմ ըսի, բայց յաւելուածով մը. այսինքն՝ եթէ այսօր ստիպողական համարի ժողովն յանձնախմբին ընտրութիւնը կատարել, նախորդ նստի ատենագրութեան այն մասն՝ որ այս յանձնախմբի խնդրոյն կվերաբերի, վաւերացնելով հանդերձ պէտք է կատարել ընտրութիւնը:

Գալով Պէկեան էֆէնտի, որ նախորդ նստի ատենագրութեան վաւերացման հետ խնդրոյն նախաքննութեան յղումն ընդունելէ ետեւ, զայն յետաձգելու դիտումով ելաւ պատճառ մ'ալ մէջ բերաւ ըսելով թէ Պէրլին գացող ազգային պատգամաւորներէն մին

որ դեռ չէ եկած, անպատճառ գալ հարկ է, այս մասին կպատասխանեմ թէ ամենեւին այդ պատգամաւորին գալուն սպասելու հարկ չկայ, և թէ այսպիսի պատճառաբանութիւն մը բնաւ ընդունելի չէ, քանի որ ինք Հայկական խնդիրը վարող անձն ամբաստանած է արդէն յատենի աստ պօռալով թէ իր ձեռքը պաշտօնական թղթեր ունի, և անոնցմով պիտի հաստատէ իր ամբաստանութիւնը:

Կվերջացնեմ խօսքս եզրակացնելով թէ անցեալ նստի ատենագրութեան յանձնախմբութիւն վերաբերեալ մասն այսօր վաւերացնելէ ետեւ անմիջապէս անոր ընտրութիւնը կատարել հարկ է:

**ՓՍՓՍՁԵԱՆ Ս. ԷՖ.** — Հարցապնդումն ստորագրող 12 երեսփոխանք շատ աճապարեք են՝ Պէրլին գտնուող ազգային պատգամաւորաց վերադարձէն առաջ այդ հարցումն ընելով. պէտք էր սպասել պատգամաւորաց վերադառնալուն և յետոյ յուզել ազգային խնդիրը, ինչպէս որ իրենք ալ կզգան այժմ: Բայց որպէս և իցէ հարցումն եղեր և պատասխան առնուեր է Ս. Պատրիարքին, և անոր վրայ այնպիսի դիտողութիւններ եղեր են՝ որ գործը եկեր հասեր է հոն՝ որպէս զի մասնաժողով մը կազմուի և նախաքննական ձեւով խնդրոյն վրայ տեղեկութիւն մ'առնուի: Այս մասին՝ քանի որ նախորդ նստին ատենագրութիւնը չէ վաւերացած, և չդիտեմ թէ Պէկեան էֆէնտի՝ որ պահ մ'առաջ կըլէր թէ իր խօսքերն այլալուած են, մինչև ո՞ր աստիճան պիտի սրբագրէ իր խօսքերը, բան մը ըսելիք չունիմ առ այժմ:

Ես ուրիշ բան պիտի ըսեմ, Ազգային գործոց մասին լաւատես մէկն եմ, և այն գունով պիտի խօսիմ: Ազգը քանի մը աղէկ յատկութիւններ ցուցուց սոյն ազգային խնդրոյն մէջ, մէկն այս է որ ամեն կուտակցութիւնք միացան, երկպառակութիւնք և ատեղութիւնք լուեցին, և ամենքը մէկէն Սրբազան Պատրիարքին վրայ՝ անսահման կերպով վստահութիւն ունեցան և անոր յանձնեցին ազգային խնդիրն իր ամեն պարագաներով:

և մինչև ետք կատարեալ միութեամբ շարունակեցին իրենց այս վստահութիւնը . ասի զամենքս ալ սքանչացուցած է արդարեւ : Թէ և Սրբազան Պատրիարքն մինակ չգործեց, այլ աշխատակիցներ ունեցաւ, ես ալ խընդրոյն աշխատութեան մէջ գտնուեցայ և ի Պէրլին ազգային պատգամաւորութեան ալ գործակից եղայ, սակայն պատասխանատուն Սրբազան Պատրիարքն է, որոյ գոհունակութեանն արժանացած ըլլալով՝ այս մասին որ և է պատասխանատուութենէ ազատուած եմք :

Ազգին ուրիշ մէկ աղէկ յատկութիւնն ալ այժմ կերեւայ . ժամանակն եկածին պէս իր համարառութեան իրաւունքը կուզէ գործադրել : Այս ամեն իրարանցումն ահա այդ համարառութեան իրաւունքը գործադրելու համար կըլլան, այն է՝ ազգային խնդրոյն բոլոր եղելութիւններն իմանալ : Բերեմն ինչո՞ւ կտազնապիք քննիչ և նախաքննիչ բառերուն համար . ո՞չ ապաքէն դուք ազգին երեսօթականներն էք . և միթէ կարող չէ՞ք քննել և լսել ամեն բան դռնփակ նստի մէջ, իսկ այժմէն կ'այտարարեմ Ձեր առջեւ և խղճիս առջեւ, թէ ինչ որ գործուած է սոյն խնդրոյն մէջ, ազգին շահուցը համաձայն գործուած է . և եթէ Պէրլինէն էֆէնտի հակառակը գործուեցաւ կըսէ, կցաւիմ որ առանց քննութեան այդ գատատանը կընէ . կցաւիմ որ շատ աճապարած է, և այնպիսի եղանակաւ՝ որ տարապարտ կ'սկսածներու տեղի տուեր է . երբ կըսէ թէ ազգին վերքերն ինչ որ էին՝ անոնք չեն ներկայացուեր Քօնկրէին, կցաւիմ և կ'պարտաւորիմ ըսել թէ ուրեմն ես՝ որ ի Պէրլին ազգային պատգամաւորութեան գործակից գտնուած եմ, չեմ գիտեր եղեր ազգին վերքերն, ես՝ որ 1870 թուականէն ի վեր ազգին իրաւացի վերքերուն ինչ ըլլալն իրեւատենադպիր Հարստահարութեանց յանձնաժողովներուն շատ աղէկ ճանչցած և հասկցած եմ :

Ինչպէս որ ըսի, Ազգին գեղեցիկ յատկութիւններէն մէկն է համար առնուլ, ուստի այս իրարանցումն անոր հետեւանքն հա-

մարելով և ցաւելով որ այս առթիւ անտեղի ակնարկութիւններ եղեր են, կըսեմ թէ ահա համար առնելու ժամն եկած հասած է . կուզէ ժողովն այս համարառութիւնն ենք անձամբ թող ընէ, կուզէ յանձնախումբի ձեռք թող ընէ : Սակայն ես կանխաւ ըսեմ ձեզ, եթէ յանձնախումբի ձգէք գործն, ո՞վ որ ալ անդամ ընտրէք, ո՞րչափ ալ վստահ ըլլաք, ես չեմ կարծեր որ անոր վրայ ալ կասկած չյարուցանէք : Ի՞նչ վրաս ալ կատարեալ վստահութիւն անեցողներէն այսօր կասկածողներ կ'առնեմ . պահ մ'առաջ քահանայ մը՝ որ ինչ բացատրութիւն կուզէր իմ ի Պէրլին ունեցած պաշտօնիս վրայ, երբ հարցուցի իրեն թէ վստահ է իմ վրայ եթէ բացատրեմ պաշտօնս . պատասխանեց թէ՛ ոչ, առանց իմ բացատրութիւնս լսելու : Երբ խարուած կնկատեն զիս, որ ազգային շահուց խնդրոյն մէջ երկաթի բնաւորութեան տէր անձ մը նկատուած եմ, ի հարկէ սյուց վրայ ալ այդ փոփոխանակութիւնը պիտի նկատեն . և քիչ մ'ալ յառաջ երթալով ըսեմ թէ՛ եթէ նոյն իսկ այս ժողովն ինք դռնփակ նստի մէջ լսէ ամեն բան և գոհ ըլլայ, դուք ժողովուրդը թերեւս պիտի սկսի գժգոհիլ և կասկածիլ : Այս վիճակը կնշանակէ թէ ամեն հայ կըզայ և կհասկնայ ներկայ ազգային խնդիրը, և անոր անյաջողութեանը վրայ ցուելով՝ կուզէ իմանալ թէ պատճառն ինչ էր . կասկածներ ալ կրնան գոյանալ, բայց մինչև աստիճան մը, ոչ թէ այս կծու և նախատելից եղանակաւ, որ ի գործ դրուեր է նախընթաց նստին միջ :

Ներկայ ազգային խնդիրն վերջացած չէ, այլ նոր սկսուած . ուստի կիրքն ու անձնականութիւնը մէկդի թողուլ պէտք է այս խնդրոյն մէջ . ոչ ոք կրնայ ապագային առջև ծանր պատասխանատուութիւն մը ստանձնել այս խնդրոյն առջև արգելք հանած ըլլալու . քննել և իմանալ կուզէք, քննեցէք և իմացէք . ի՞նչ հարկ կայ յանձնախումբի դնելու . աւելի աղէկ է որ ժողովը դռնփակ նստ մը ընէ և ամեն բան ինքնին լսէ ու իմանայ . Եթէ Ս. Պատրիարքը յայտարարած է թէ բան կայ որ չկրնար հրապարակել, մի՞ կասկածիք :

դռնփակ նստի մէջ կրնաք խնդրոյն էութեան վերաբերեալ ամեն բան լսել և իմանալ, և եթէ այս վստահութիւնը շարաշար գործածուի՝ Յովնան մը պէտք պիտի ըլլայ ծովը նետելու, այն ալ պատրաստուած է արդէն : Կեցրակացեմ ըսելով թէ քանի որ Ազգային ժողովը Ս. Պատրիարքին վստահութիւն յայտնելով պաշտօն մը յանձնած է անոր կատարելու, իրաւունք ունի անոր կատարած պաշտօնին արդիւնքը լսել և իմանալ : Այս նպատակին հասնելու համար իրարանցումի հարկ չկայ . ժողովին բացարձակ իրաւունքն է ամեն բան լսել և իմանալ, թէ՛ ինք ուղղակի կերպով, և թէ՛ յանձնախումբի միջոցաւ, ասի իր գիտնալիք բանն է : Իսկ ես կառաջարկեմ դռնփակ նստի մէջ լսել ամեն բան իր պարագայիւք :

**ՉԱՅՆԵՐ.— ԳՈՒԷ ԳՈՒԷ :**

**ՈՏԻՆԱՊԵՏ ԷՖ.—** Տակաւին չորս երեսփոխան ունինք, որ խօսք առած են և կուզեն խօսիլ . բայց որովհետեւ քուէ ծայնողներ եղան, ժողովին պիտի հարցնեմ թէ կուզէ՞ շարունակել վիճարանութիւնը :

Ժողովը հաւանեցաւ շարունակել մինչև արձանագրեալ խօսից կարգը լրանայ :

**ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.—** Անցեալ նստին որոշում եղած է յանձնախումբ մ'ընտրել . այսօր և թէ Փափագեան էֆէնտի առաջարկութեան համաձայնինք, մեր նախորդ որոշումն ետ առնուլ հարկ պիտի ըլլայ . այս չկրնար ըլլալ . որովհետեւ անցեալ նստին որոշումն ընելէ ետեւ երբ գործադրութեան իսկ կձեռնարկէինք, գժքաղարար ժամանակը չներեց յառաջ տանիլ, և կրօն ու Քաղ. ժողովոյ խնդրոյն պատճառաւ այս յանձնախումբին ընտրութիւնն ետ մնաց :

**ՄԷՐԵԷՄԳՈՒԼԻ Յ. ԷՖ.—** Ինչ առաջ խօսք պաշտօնակիցներս լսելէ ետեւ կ'առնեմ

որ երկու ժամէ ի վեր տիրած յուզումը բոլորովին աւելորդ է, վասն զի նոյն իսկ Պէրլինէն էֆ . որ ի սկզբան յանձնախումբի պաշտօնին սահմանն անորոյ ըլլալը կը փաստաբանէր, վերջապէս իր խօսքերովն ուզեց հասկցնել թէ յանձնախումբը չէ թէ քննիչ այլ նախաքննիչ պիտի ըլլայ . ըստ որոյման նախընթաց նստին . Փափագեան էֆէնտի պաշտօնակիցս ալ, շփոթած միտքերը հանդարտեցնելու համար խնդրոյն վրայ ինչ ինչ լուստարանութիւններ տալէ ետեւ, նա ալ ընդդէմ չգտնուեցաւ յանձնախումբի ընտրութեան և միանգամայն ճողովոյս իրաւանց ընդարձակութիւնն զգացուց ըսելով որ ճողովն կրնայ իր տեսանին մէջ ալ լսել ամեն եղելութիւն իր պարագայիւք . Փափագեան էֆէնտի ծառայութիւն մ'ըրաւ իր տուած վստահական տեղեկութիւններով, որք շատերուն սիրտը հանդարտեցուցին : Շնորհակալ եմ իրմէ այս մասին :

Նոյն իսկ Շահպազ էֆէնտի՝ որ Պէրլինէն էֆէնտիի դէմ խօսեցաւ, իր վերջարանութիւնը հոն յանգեցուց թէ ատենագրութեան՝ յանձնախումբի վերաբերեալ մասն այսօր վաւերացնելէ ետեւ, ընտրութիւնն անմիջապէս կատարել պէտք է : Ես ալ պահ մը վարանած էի թէ ատենագրութիւնը չվաւերացած ինչպէս կարելի էր յանձնախումբին ընտրութիւնը կատարել, առանց անոր պաշտօնը խնդրոյ տակ ձգելու : Սակայն եղած ընդդիմախօսութիւնները լսելէ ետեւ այս կէտը պարզուած կը տեսնեմ, և կտեսնեմ որ մեծ մաս կ'կազմեն ժողովիս մէջ անոնք՝ որք յանձնախումբին պաշտօնը նախաքննիչ ըլլալ հասկըցած են :

Իսկ անոր քննիչ ըլլալն ուղղներուն դիտել կուտամ թէ ընտրելի յանձնախումբին նախաքննութեան պաշտօն տալով աւելի ուղիղ կերպիւ իրենց նպատակին կը յիմեն, քան թէ քննութեան պաշտօն տալով . վասն զի նախաքննիչ յանձնախումբ մը քննութեան նախապատրաստական մասը միայն կրնայ կատարել, և հետեւաբար ճողովն անոր տեղեկագիրը լսելէ ետեւ խնդիրն իւր ատեա-

նին մէջ կը ընէ : եթէ հարկ լինի : մինչդեռ քննիչ յանձնարումը մը խնդրոյն վրայ վերջնական կարծիք կը բերէ մեզ : Այս կէտը քննիչ յանձնարումը ուղղութեան ուղղութեան ներկայացնելէս յետոյ , կարծեմ թէ այլ եւս համաձայնութիւն կ'առնանայ յանձնարմբի պաշտօնին սահմանին վրայ և այս կէտը պարզուելէ ետեւ միայն ընտրութեան գործը կը մնայ մեզ կատարել , որ ըստ իս պէտք չէ վայրկեան մը յատարել . վասն զի Պէկեան էֆէնտի անցեալ նստին իր յարուցած խնդիրն այնպիսի խոշոր և ծանրակշիռ բառերով սկսաւ որ՝ այն օրէն 'ի վեր ամեն սիրտ խոտոված , գայթակղած և հետաքրքիր է իմանալու թէ արդեօք ինչ խաղեր կամ մեքենայութիւններ 'ի գործ դրուած են մեր ազգային խնդրոյն մէջ :

Եւ քիչ մ'առաջ Պէկեան էֆէնտի ի մասնաւորի ըրած խօսքերը լսելով , աւելի ևս չայթակղեցայ և հետաքրքրութիւնս անտանդի չափով գրգռեցաւ : Պէկեան էֆէնտի ըսէր թէ ազգասիրական պարտականութիւն կհամարի այս խնդրոյն վերաբերեալ ըրած գտնուած վաւերական թղթերն երբեւան չհանել : Եւ եթէ զանոնք երեւան հանելու հետեւանաց պատասխանատուութիւնը գրաւորապէս վրան առնող մը գտնար , նամակ մը միայն պիտի ներկայացնէր՝ որ բաւական պիտի ըլլար իր բոլոր ըսածներն ապացուցանելու : Պէկեան էֆէնտի այս խօսքերն երթալով խնդիրը կծանրացնեն և գայթակղութիւնն աւելի կտարածեն : Ես չեմ հասկնար թէ այս տեսակ ազգասիրական պարտականութիւն մը ինչ կնշանակէ , և չեմ ալ կրնար այսօրինակ ազգասիրութեան մասնակից ըլլալ : Ինչպէս որ դուք ալ չէք ուզեր ըլլալ ի հարկէ :

Եթէ Պէկեան էֆէնտի ձեռքն այնպիսի վաւերագրեր կան , որք ազգային խնդրոյն մէջ խաբէութիւն , նենգութիւն , դաւ , խաբողականներ մտած ըլլալը կապացուցանեն , ինչպէս կըսէր ինքն անցեալ նստին , պէտք է որ անյապաղ երևան հանէ զանոնք : ասով միայն իր ազգասիրական պարտքը կատարած կըլլայ . ապա թէ ոչ՝ ելնել գայ-

թակղական յայտարարութիւններ ընել , միտքերը պաշարել , սիրտերը խոտովել , ամեն կողմ գայթակղութիւն սփռել , և այժմ ալ յանձնարումին ընտրութեան յետոս ձգուել փաստարանել և իր քով եղած վաւերական պաշտօնագրերը երևան չհանելու համար ազգասիրութիւնը պատրուակ բռնել , այս ամենն ուրիշ բանի չեն ծառայեր՝ եթէ ոչ՝ շատերուն եռանդը մարելու , ախատող ձեռքերը ջլատելու և գործոյն ընթացքը կասեցնելու , որ ամենէն մեծ դաւաճանութիւն եղած կըլլայ ընդդէմ Ազգին :

**Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ ՎԱՐԴ .** — Օրակարգի խնդրէն այնչափ հեռացանք որ խօսքերը ճապաղեցան և վիճարանութիւնն իր սահմանէն խտրորեցուցին : Այս բանիս համար ցաւ կը յայտնեմ Դիւանին և մասնաւորապէս Ատենապետ էֆէնտիին՝ որ թող տուաւ վիճարանութիւնն իր սահմանէն այսչափ շեղելու . . .

**Տ. ՄԱՏԹԷՆՈՍ ԵՊԻՍ .** — (Ընդհեղմէ) Աստուծոյն առիթ կուտաք ատենապետէֆէնտիին զձեզ լսեցնելու :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ .** — Դատ գոհ եմ որ 'եպիսկոպոսէ մը կուգայ այդ ազգաբարութիւնն ատենարան Հայր սուրբին դէմ :

**Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ ՎԱՐԴ .** — (Երանալիցով) Թող ներէ ինձ Մատթէոս սրբազանն ըսելու որ իրաւունք չունի ինք ոչ ատենապետի պաշտօն կատարելու և ոչ զիս ընդմիջելու :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ .** — Դուք որչափ որ ունիք , ինքն ալ այնչափ ունեցաւ :

**Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ ՎԱՐԴ .** — (Խօսիչ ընել յետոս) Կտեսնեմ որ այսօր խնդրոյն վրայ այնպիսի նոր պարագաներ երևան եկան որ կհարկեցնեն զիս անցեալ նստին մէջ անցած եղելութիւնն աչքի առջեւ բերել և ժողովին ուղղութիւնն առ այն հրահրել ,

Պէտք է յիշեցնեմ ամենուր , և մասնաւորապէս անոնց՝ որ անցեալ նստին ներկայ չէին և այսօր եկած են . թէ անցեալ նստին մեր ներկայ եղողներս գրեթէ առ հասարակ խնդրոյ վրայ թեր ուղիմ եղած դիտողութիւնները լսելէ ետեւ համաձայնեցանք յանձնարմբի մ'ընտրութեան մասին , ուստի որոշուեցաւ նոյն օրը յանձնարումը մ'ընտրել , որոյ պաշտօնը թէ՛ քննութիւն ըլլայ և թէ՛ նախաքննութիւն , փոյթ չէ ինձ , ասիկա ձեւին վերաբերեալ մէկ կէտն է . նմանապէս՝ նախորդ նստին ատենագրութեանը այսօր վաւերացուած ըլլայ կամ ոչ՝ փոյթ չէ : վասն զի ատենագրութիւնն եթէ սխալ կէտեր ալ պարունակէ , անոնք կրնան ուղղիլ , և վնաս մը չեն բերեր ժողովին այն որոշման՝ որ է ընտրութիւն յանձնարմբի . ուստի տեղի չունի Փափաղեան էֆէնտիի այն խօսքը՝ թէ ըստ որում ատենագրութիւնն այսօր վաւերացուած չէ , յանձնարմբին ընտրութիւնը պէտք է յետաձգել :

Գալով Փափաղեան էֆէնտիի այն խօսքերուն , որով ազգային խնդրոյն վրայ ինչ ինչ տեղեկութիւններ տուաւ և ժողովոյ համարատուութեան իրաւանց ընդարձակութիւնը բացատրեց , պէտք է բռնմ թէ նախորդ նստին մէջ ալ այս կէտերուն վրայ բաւականօրէն խօսուած էին արդէն . Ս. Պատրիարքին վրայ ժողովին ունեցած վատահոթութիւնը կրկնուած և յայտարարուած էր թէ Նորին Արքայութիւնը ժողովէն առած արտօնութեան համեմատ գործեց , և թէ ոչ որ կրնայ մեզոյ իր լինել թէ անուպիղ ընթացք մը բռնած է ազգային խնդրոյն մէջ : Դատ աղկ ըսաւ Փափաղեան էֆէնտի թէ այսօր կարգն եկած է ժողովոյս համարատուութեանը , ես ալ նախորդ նստին մէջ ըսի թէ ծածկանիչ հեռագիր , թղթակցութիւն և ամենայն գաղտնիք՝ որ տեղի ունեցած են ազգային խնդրոյն մէջ , այս ամենը մի առ մի քննելու և իմանալու ժամն հասած է արդէն :

Բայց նկատելով որ Ս. Պատրիարքն 12 երեսփոխանաց հարցապնդման պատասխանելու առթիւ բերած ատենարանութեան մէջ

կ'այտարարէր թէ ատկուին իր ամեն պատասխանատուութեան զանգակը հնչեցնելու ժամանակն եկած չէ , միւս կողմէ նկատելով որ Պէկեան էֆէնտի նոյն միջոցին այնպիսի ծանր , անակնունելի , տարօրինակ . . . ակնարկութիւններ , ամբաստանութիւններ յառաջ բերաւ , որոնք պահ մը՝ ինչպէս Մէրեթմ—Գուլի էֆէնտի ըսաւ , ամենուս միաքը պղտորեցին և յուզեցին , նկատելով որ ժողովոյս պարտքն է այս խնդրոյն վերաբերեալ նպատաւոր և աննպատա պարագաներուն ամենքն ալ քննել և իմանալ թէ Պէկեան էֆէնտիի ամբաստանութիւնները մինչեւ որ աստիճան ստոյգ են , զորս թղթեր ի ձեռին ապացուցանելու պատրաստ լինիլը կ'այտարարէր , և որոյ խօսքն անցեալ նստին Ատենապետ փաշան արդիւնց չդիտեմ կանոնագրութեան ո'ր յօդուածոյն տրամադրութեան համաձայն , որոյ համար Պէկեան էֆէնտի արդէն բողոքած է և այդ իրենց զխնայիք բանն է , և նկատելով որ ինչպէս Պէկեան էֆէնտի , նոյնպէս ամենա ալ ազգին շահը պաշտպանելու մտադիր եմք , վերջապէս ընդունեցինք քննութիւնն բանալ այս ժողովին մէջ , և այս նպատակաւ նախաքննիչ յանձնարումը մը կարգել որոշեցինք . բայց անցեալ նստին ժամանակն ու ըլլալուն շիրքինք ձեռնարկել այս յանձնարմբին ընտրութեան այսօր պէտք է ձեռնարկելք և կատարելք առանց կրից և առանց ժամովստուութեան , որովս զի յանձնարումին երթոյ լսել Պատրիարքին ըսելիքները և ժամ յառաջ իր տեղեկագիրը ժողովին հաղորդէ , որն որ եթէ գոհ չընէ ժողովս , այն ատեն կարող ենք զընդմիակ նիստ մը ընել և ամեն բան լսել Ս. Պատրիարքէն :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ .** — Ըսել է , Ձեր կարծիքն ալ այս է որ ընտրուելիք յանձնարմբին պաշտօնը պիտի ըլլայ լսել Ս. Պատրիարքին տեղեկութիւնը և ժողովին հաղորդել տեղեկագրով մը :

**ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ .** — Հրահրագիր

մ'ուները մեքերնիս . որոյ մէջ ընտրութիւն ըննիչ յանձնախումբի գրուած է և զոր Ժողովըն որոշած է այսօր կատարել : Կարծանամ և չգիտեմ ինչպէս մեկնեմ . երբ արդէն որոշուած խնդրոյ մը վրայ նորէն վրձարանութիւն կրկայ . Ժողովն ո՛րմէ կառնու այդ արտօնութիւնն . եթէ այսպէս արդէն որոշուած խնդրոյ մը վրայ նոր վիճարանութիւն և նոր գիտողութիւններ սխալ ըլլան , մեք չսխալ կրնանք գործ մը լինցնել , և եթէ ասանկ երթայ՝ Ժողովոյս որոշումները չսխալ յարգուին :

Ժողովս եախորդ նստին մէջ որոշած է յանձնախումբ մ'ընտրել . զասանք ուրեմն մեր նախորդ որոշման , կատարենք յանձնախումբին ընտրութիւնը և անցնինք օրակարգի խնդրոյն՝ որ է զատարակութեան խնդիրն : Ինչպէս երբեմն ուրիշ անթիւ գիտել տուած է փափազեան Էֆէնտի բարեկամս , երբ զատարակութեան խնդիր կուգայ՝ մէյմէկ անակնկալ խնդիրներով ետ կ'մնայ . ցաւալի է այս , Տեսարք եիեւսփոխանը , և ես իրրեւ երեսփոխան չեմ կրնար հանդուրժել երբէք որ ճոս ժամապահաւ ըլլանք . ուստի ինչպէս ըսի , կասաջարկեմ կատարել անսխալ յանձնախումբի ընտրութիւնը և զառնալ զատարակութեան կենսական խնդրոյն :

ՊԵՆՏԵՆ Թ. ԷՖ. — Կարէք որ Ս. Պատրիարքն իր պատասխանին մէջ կրկին պատասխանատուութիւն ունենալը յայտնած էր , մէյ մը այս ժողովին առջեւ և մէյ մ'ալ պատմութեան առջեւ , և իր տուած բացատրութիւններէն աւելին շունիմ տալ ըսելով իր անխոջ պատասխանատուութիւնը պատմութեան վերապահելու ղաժ էր :

Ասոր վրայ էր որ Ատենապետ փաշան խնդիրը նախազնոյզ զուրս նետել ուզեց . ասոր դէմ ես ելայ ի բեմ , և նախազնոյ մերժումն առաջարկեցի յայտարարելով որ գրութիւններ կան իմ ձեռքս՝ որ կապացուցանեն թէ խնդրոյն մէջ խարէութիւն մասած է և թէ մեր բարձրագոտիս եկեղեցականք խորուած են , և յատկացուցի թէ պէտք է

Ժողովն այս պարագաներուն քննութեանը մտնէ :

Այսօր ալ փափազեան Էֆէնտի եկաւ ըսաւ թէ Ժողովը իրրեւ համարապատասխանութիւն իր ատեանին մէջ կատարելու այս քննութիւնը . արդէն ես ալ նոյնը կ'ստեղծէի , և գայն կ'զլանային ինձ : Հուսի յետոյ որոշուեցաւ մասնախումբի մը յանձնել . թէ՛ հոս ըլլայ այս քննութիւնը և թէ՛ մասնաժողովի մէջ . ես արդէն իրր 140 երեսփոխաններէ մին՝ քուէ մ'ուների տալու . սխալ չզլանամ զայն , կամ սեւ սխալ ասմ և կամ ճերմակ . . .

ՇԱՀՊԱՋ Դ. ԷՖ. — (Ը-Գ-Է-Ը) ո՛չ , սեւ ըլլալը սխալ ապացուցանէք :

ՊԵՆՏԵՆ Թ. ԷՖ. — (Շ-Գ-Է-Ը) Ես ըսի թէ թղթեր ունիմ ի ձեռքին՝ որ կապացուցանեն թէ բարձրագոտիս եկեղեցական հարք գործիք եղած են խարուելով : Ես բարոյսովն դէմ էի քննիչ կամ նախաքննիչ յանձնախումբի գրուելուն . իմ կարծիքս էր այս ժողովին մէջ խօսիլ և պէտք եղած քննութիւնն ընել . յայց Ատենապետ փաշան արդիւնք և թոյլ շտուաւ որ խօսիմ . և վերջապէս յանձնախումբի ընտրութիւն որոշուեցաւ . այս որոշումն անդամայի է , գոնէ մինչև 3 ամիս շանցնի ըստ կանոնի :

ՉԱՅՆԵՐ. — Բաւական է . քուէ քուէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կր խնդրեմ քուէ արահանջող երեսփոխաններէն որ հաճին Մատթէոս որրագանն ալ լսել , որ վերջին ատենարանն է այս խնդրոյս մէջ :

Տ. ՄԱՏԻՍԻԱՆ ԵՊԻՍ. — Կողտչեմ , թոյ ներէ ինձ Ժողովն . վասն զի խօսելու տեղնչր չէ որ զիս ի բեմ կհանէ :

Խնդիրն երկու կէտի համար ժամապայտած և եկած հասած է այս վիճակին : մէյ մը որ Ս. Պատրիարքը կըսէ թէ քան մը կայ որ չեմ կրնար յայտնել , և մէյ մ'ալ այն թէ՛ Պէկ-

եան Էֆէնտի կըսէ որ եկեղեցականք խարուած և գործիք եղած են այս պարագային մէջ . Ժողովն ալ նախաքննիչ յանձնախումբ մը կարգել որոշած է որ երթայ Ս. Պատրիարքէն հասկընայ գործը և ժողովին տեղեկագրէ : Հարկաւ Ս. Պատրիարք և յանձնախումբի գիրար տեսած ատենին , կամ Ս. Պատրիարքն զյանձնախումբն սխալ համոզէ և կամ այս վերջինն զՍրբազան Պատրիարքին , հոյնպէս հարկաւ այս քննութեան մէջ Պէկեան Էֆէնտի ակնարկած և իւր ձեռքն եղած գրութիւններն ալ , որոնք երանի թէ կնթագրութեանց վրայ հիմնեալ բաներ չըլլային , սխալ ի քննին աւնուին :

Արդ՝ քանի որ գործն այս վիճակին հասեր է , երկարել հարկ չէ . ընտրեցէք յանձնախումբ մը՝ որոյ պաշտօնն ըստ օրինի նախաքննութիւն պէտք է ըլլայ , և չէ թէ քննութիւն :

ԿԱՐՁԵԱԼ ՉԱՅՆԵՐ. — Քուէ քուէ :

Ատենապետ Էֆէնտին անսխալապէս քուէի գրաւ , և վիճարանութեան փակման հետ , նախաքննիչ մասնաժողովոյ անդամոց ընտրութեան անսխալապէս ձեռնարկելը որոշուեցաւ միաձայն հաւանութեամբ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դերեցէք՝ Տ'ա՛րք , որ երկու խօսքով անսխալեմ ոչ թէ խնդիրն՝ որ անսխալուած է , այլ միջոց է պը :

Ի սկզբան Գիւանը կանոնագրութիւն ի ձեռին ուզեց սրբագրելի ցանկի վրայ հրատարակել Ժողովն ի քուէարկութիւն նախաքննիչ յանձնախումբի ընտրութեան համար , ինչպէս որոշուած էր արդէն անցեալ նստին : Պէկեան Էֆէնտի կանոնական գիտողութեան աղաղաւ խօսք առնելով արգելք ըլլալ ուզեց այս գործողութեան . նախ Գիւանին առաջարկած ընտրութեան եղանակը կանոնագրութեան հակառակ է ըսաւ . և երբ տեսաւ որ այնպէս չէ , խնդիրը յեղաշրջեց , և ըսաւ թէ Մասնախումբին պաշտօնը չորոշուած՝

ընտրութիւնն անկարելի էր , մինչդեռ հասկուեցաւ որ ժողովին համար Մասնախումբին պաշտօնը բացորոշապէս նշանակուած էր (Շչ-Կեր) :

Կ'ուզեմ գիտել տալ որ եթէ խօսքերն երկարեցան , և այսպիսի աղմկայից նիստ մը ունեցանք , պատեալը կանոնագրութիւնն առանց լաւ սերտելու վիճարանելու ուզելիս է : Շատ մը պտոյտներէ ետեւ զարմեալ հանկանք հասանք՝ թէ պէտք էր գիւանին առաջարկութեանը համաձայն նախաքննիչ յանձնախումբի ընտրութիւնը կատարել :

Հիմա ըստ կանոնի՝ քուէարկութեան սխալի ձեռնարկէ Ժողովն ինչպէս որ ի սկզբան ըսած էի գիւանիս կողմէ պատրաստուած ցանկին վրայ որ Յ անուն կարուանակէ : [Երեսփոխանը կարող են սրբագրել և մինչեւ իսկ Յ անունն ալ աւրել և ուրիշներ դնել : Քուէարկութեան արդիւնքին զարով , համաձայտական առաւելութիւնը կրաւ ըստ կանոնի՝ այսպիսի յանձնաժողովոյ ընտրութեան մէջ :

Գիւանը ներկայացուց հետագայ ցանկը .

Կարապետ Եպիսկոպոս Սերոփեան	
Ներսէս Ա. արդապետ Աւանեան	
Յակոբ	Փափազեան
Աննաքերիմ Էֆէնտի Մանուկեան	
Բարսեղ	Հարաճեան
Պապի	Պապոեան

Երեսփոխանաց ամանց կողմէ գիտողութիւն ըլլալով՝ որ Յակոբ վարդապետ երեսփոխանաց կարգէն չէ , անոր անունն առուեցաւ և տեղը դրուեցաւ :

Տէր Գեորգ քահանայ Արժրուհի

Քուէարկութիւնն սկսելով , քուէհամարի քննիչ կարգեցան վիճակաւ ,

Տէր Սահակ քահանայ Տէր Սարգսեան  
Մկրտիչ Էֆէնտի Քուրճիխանլեան  
Համբարձումս Մազպուլեան  
Կարապետ Երթիւճեան

Քուէ համարը կատարուելով, հետագայ  
սրբիւնքն ունեցաւ :

Քիւ քուէարկուաց 47

Պարապ քուէ 1

Ճիւղ 46

Առաւելագոյն քուէ ստացան՝

Կարապետ Եպիսկոպոս Սերոբեան քուէ 25

Կէրոս Վարդապետ Ալանեան » 58

Անթրոսիոս » Բուրինեան » 22

Սենեքերիմ Էփէնտի Մանուկեան » 39

Ռարսեղ » Հալանեան » 20

Պապի » Պապոսեան » 18

Գիւանն ընտրութեան սոյն արդիւնքը  
ժողովին ներկայացուց, և հետեւապէս վե-  
րագրեալք յանձնարարի անդամ հռչակուե-  
ցան ժողովին կողմէ :

Յաջորդ նիստն երեք շաբաթէ ետեւ դու-  
մարեւ որոշուելով, ստեանը գոցուեցաւ ժամ  
10ին :

Ատենադպիր Ատենապետ

Հ. Ս. Սէֆեան Տէրտէս Եսայիան

1878 թ. 138

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄՆՈՒԿԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ՆԱԽՈՒՅ ՅԱՏԿԱՅԵԱՍ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի, և Ղալաթիոյ  
Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ բանկայք և Հայ գրաւաճառաց քով: